# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 025-7

«Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցման մասին» պայմանագրում փոփոխություն կատարելու մասին

**«07» հոկտեմբերի 2021թ.** **ք.Երևան**

**Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը,**

(այսուհետ՝ Պատվիրատու)

որպես բժշկական օգնության և սպասարկման պետական պատվեր տեղադրող, մի կողմից, ի դեմս առողջապահության նախարարության գլխավոր քարտուղար՝ Վարդուհի Գրիգորյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա

և

**Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն ՓԲԸ-ն**

(այսուհետ՝ Կատարող)

ի դեմս տնօրեն՝ Վարդան Ավագյանի, որը գործում է Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն ՓԲԸ-ի կանոնադրության հիման վրա

հիմք ընդունելով առողջապահության նախարարի 2021 թվականի հոկտեմբերի 7-ի թիվ 3747-Ա հրամանը փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Պատվիրատուի և Կատարողի միջև 2020 թվականի դեկտեմբերի 28-ին կնքված «Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցման մասին» թիվ ԱՆ ՊԱԳ-ԾՁԲ-025 պայմանագրի հավելված 2-ը փոփոխել և շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրին կից հավելված 1-ի:
2. Սույն համաձայնագիրը իր հավելվածով կազմում է Պայմանագրի անբաժանելի մասը:
3. Սույն համաձայնագիրը կազմված է հավասար իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից՝ Կողմերից յուրաքանչյուրին տրվում է մեկական օրինակ:
4. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Պատվիրատուի և Կատարողի կողմից ստորագրվելու պահից:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝**

**Առողջապահության նախարարություն**

Գլխավոր քարտուղար՝ Վարդուհի Գրիգորյան

_____

/ստորագրություն/

**ԿԱՏԱՐՈՂ՝**

**Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն ՓԲԸ**

Տնօրեն՝ Վարդան Ավագյան

_____

/ստորագրություն/